ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք, ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, հեռ. (0237)34441 ,
metsamormeria@yandex.ru

N 498
27 հոկտեմբերի 2021թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ՝
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան Պարոն Մաթևոսյան.

Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Արմավիրի մարզպետի 2021 թվականի օգոստոսի 13-ի ՆՄՈ/354-2021 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքում իրականացված իրավական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը և ավագանու որոշումները:

Առդիր՝ 3 թերթ.

Համայնքի ղեկավար՝ Ռ. Գրիգորյան

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականին Մեծամոր համայնքում իրականացված իրավական հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ

Համայնքում իրականացված իրավական հսկողության արդյունքները քննարկվել են ավագանու նիստում, արձանագրված խախտումները վերացնելու առնչությամբ ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ յուրաքանչյուր խախտման առումով կայացվել են համայնքի ավագանու որոշումներ:

1. Համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 27-ի N 30 որոշմամբ համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրականացված իրավական հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումներն ու թերություններն ընդունվել են ի գիտություն, և համայնքի ղեկավարին առաջարկվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ արձանագրված խախտումներն ու թերություններն ուղղելու և հետագայում բացառելու ուղղությամբ:
2. Համայնքի բյուջեում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու ընթացակարգը Համայնքի ավագանու կանոնակարգում սահմանելու համար փոփոխություններ և լրացումներ կատարելը նպատակահարմար չենք համարում քանի որ առաջիկայում սպասվում են համայնքի ավագանու հերթական ընտրություններ:
3. Այսուհետ համայնքի ղեկավարի վարձատրության չափը կսահմանվի համայնքի ավագանու առանձին որոշմամբ:
4. Ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 27-ի N 33 որոշմամբ ընդուվել է տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը:
5. Այսուհետ գույքագրման փաստաթղթերին կկցվեն համայնքի ընթացիկ քարտեզը, իսկ նոր գույք ձեռք բերելիս կամ օտարելիս գույքագրման փաստաթղթերում մեկշաբաթյա ժամկետում կկատարվեն համապատասխան փոփոխություններ և կներկայացվի ավագանու հաստատմանը:
6. Ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 27-ի N 35 որոշմամբ սահմանվել է Մեծամոր համայնքի վարչական սահմաններում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները:
7. Ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 27-ի N 34 որոշմամբ սահմանվել է համայնքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները:
8. Այսուհետ ավագանու նիստերի արձանագրումը կիրականացվի օրենքով սահմանված կարգով՝ պահպանելով ՀՀ գործող օրենսդրության պահանջները:
9. Մեծամոր համայնքի «Թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Լաուրա Աբրահամյանին, «Թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ Անահիտ Բաբայանին, «Թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Գայանե Հակոբյանին և Մեծամորի մշակույթի տան տնօրեն Ռազմիկ Գեղամյանին ծանուցվել է աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին:

10. «Շառլ ազնավուրի անվան Արվետսի դպրոց ՀՈԱԿ-ի տնօրեն Ժիրայր Հարությունյանը ծանուցվել է ՀՀ կրթության և գիտության նախարարի 26.04.2011թ. N 416-Ն հրամանով հաստատված հավելվածի 2-րդ գլխի 3-րդ կետի պահանջների և իր հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին:
11. «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատարի հետ աշխատանքային պայմանագիրը կլուծվի առաջիկայում տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարելու և հաղթողի կողմից թափուր պաշտոնը համալրվելու արդյունքում, քանի որ այս պահին պայմանագիրը լուծելը նպատակահարմար չենք գտնում՝ բարձրագույն կրթությամբ և աշխատանքային փոնով համապատասխանող տնօրենի պաշտոնը փոխարինողի բացակայության պատճառով:
12. Այսուհետ տրանսպորտային միջոցների գույքահարկի և հողի հարկի գումարները համայնքը սպասարկող գանձապետական հաշիվ կմուտքագրվեն օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:
13. Այսուհետ գնումները կիրականացվեն գնումների պլանի /անվանացանկի/ համապատասխան փոփոխությունների և հրապարակման արդյունքում:
14. Նախկինում կառուցված թվով 96 ապօրինի հասարակական շինություններից մինչ օրս օրինականացվել է 67 հասարակական շինություն, իսկ մնացած ապօրինի շինությունների մասով կանցկացվի ուսումնասիրություն և կտրվի համապատասխան լուծում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, (0237)34441 metsamormeria@yandex.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2021 թվականի N 30-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ՄԻՆՉԵՎ 14-Ը ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետով, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի օգոստոսի 13-ի ՆՄՈ/354-2021 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 14-ը Մեծամոր համայնքում իրականացված իրավական հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումներն ու թերություններն ընդունել ի գիտություն:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին ձեռնարկել համապատասխան միջոցներ արձանագրված խախտումներն ու թերություններն ուղղելու և հետագայում բացառելու ուղղությամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

կողմ-9 դեմ-0 ձեռնպահ-0

ԲԱՐՍԵՂՅԱՆ ՎՈԼՈԴՅԱ
ԳԱԼՈՅԱՆ ՖԵԼԻՔՍ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՅԿ
ՂՈՒԼԻՋԱՆՅԱՆ ՄԱՍԻՍ
ՄԱՒԼՅԱՆ ԿՈԼՅԱ
ՄԿՐՏՉՅԱՆ ԱՇՈՏ
ՄԿՐՏՉՅԱՆ ՄՀԵՐ

Համայնքի ղեկավար՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ